Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	**011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա**
Ընդհանուր նկարագրությունը	Մագիստրոսի կրթական ծրագիրը կառուցված է հետևյալ հիմնական կրթամասերից՝ «Ընդհանուր կառուցամաս», «Հատուկ մասնագիտական կառուցամաս», «Առարկաներ ուսանողի ընտրությամբ», «Պրակտիկա», «Գիտահետազոտական աշխատանք»: Ուսման տևողությունը 1 տարի է՝ 2 կիսամյակով: 1-ին կիսամյակը ներառում է 16 շաբաթ, իսկ 2-րդը՝ 12 շաբաթ: Ծրագիրը բազմաբնագավառ է և ապահովում է անհրաժեշտ կոմպետենցիաներ:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2024/08/մագ-ՖԴԱՖԿ-առկա.pdf
Շնորհվող աստիճանը	Մանկավարժության մագիստրոս
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
Կրեդիտները	60
Ուսուցման ձևը	Առկա
Ծրագրի տևողությունը	1 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա Մասնագիտական գիտելիք և իմացություն Ա1. Բնութագրելու ֆիզիկական դաստիարակության և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ոլորտների հայեցակարգերը, կառավարման մեխանիզմները և հետազոտման ուղղությունները: Ա2. Նկարագրելու ներառական կրթության համակարգում՝ ֆիզիկական դաստիարակության կազմակերպման և իրականացման ժամանակակից մոտեցումներն ու մեթոդները: Ա3. Հիմնավորելու ֆիզիկական դաստիարակությունում և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայում կիրառվող հոգեբանամանկավարժական և բժշկակենսաբանական մեթոդները, միջոցները և սկզբունքները՝ տարանջատելով ոլորտներում առկա հիմնախնդիրները:

	Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Բ1. Պլանավորելու մանկավարժական, գիտահետազոտական, կազմակերպչական, գործունեություն հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ անձանց տարիքային և անհատական զարգացման առանձնահատկությունները: Բ2. Իրականացնելու հետազոտություններ՝ ստացված արդյունքները վերլուծելով, գնահատելով, ներդնելով մասնագիտական գործընթաց: Բ3. Կիրառելու ֆիզիկական դաստիարակության և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ոլորտներում կիրառվող հետազոտության մեթոդներն ու միջոցները մասնագիտության կարիքները գնահատելու համար: Բ4. Վերլուծելու ոլորտում առկա հիմնախնդիրները՝ պատրաստելով հաշվետվություններ, զեկույցներ, հոդվածներ՝ ուղղված մասնագիտական գիտելիքների և պրակտիկայի զարգացմանը: Բ5. Հետազոտելու և գնահատելու տարբեր տարիքային խմբերում ընդգրկված անձանց ֆիզիկական և ֆունկցիոնալ վիճակը՝ օգտագործելով ներառական կրթության համակարգում կիրառվող մանկավարժության նորագույն տեսությունների և ՏՀՏ–ների մեթոդները: Բ6. Վերլուծելու և ընդհանրացնելու սեփական հետազոտական գործունեության արդյունքները և դրանց շուրջ անցկացնել քննարկումներ, վարել բանավեճեր՝ դրսևորելով քննադատական մտածողություն: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Գ1. Հաղորդակցվելու մայրենի և օտար լեզվով: Գ2. Մշակելու և կիրառելու տեղական ու միջազգային գիտական, համացանցային աղբյուրներից ստացված հետազոտական տվյալները: Գ3. Իրականացնելու անհատական և թիմային աշխատանք՝ պահպանելով մասնագիտական էթիկայի և ակադեմիական ազնվության նորմերը:
Աշխատաշուկան	Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան հետագայում աշխատել՝ հանրակրթական դպրոցներում՝ որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, կրթական հաստատություններում և հարակից ոլորտներում: